DVRO-ի ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան բռնությունն արգելող դատական հրաման

REDUCE THE RISK
Gun Violence Protection Orders | Save Lives

Պաշտպանությունը բռնությունից սկսվում է այստեղ:

Եթե դուք անմիջական վտանգի տակ եք, զանգահարեք 911:

Կալիֆորնիայում միջինը յուրաքանչյուր երեք ժամը մեկ մարդ զոհվում հրազենային բռնության հետևանքով: Այս ողբերգությունները կանխելու նպատակով նահանգը սահմանել ինը տեսակի անվտանգությունն ապահովող հրամաններ: Այս հրամանները ստեղծված են մարդկանց անվտանգությունն ապահովելու համար: Դրանք ներառում են այնպիսի միջոցառումներ, ինչպիսին զենքի ժամանակավոր առգրավումը: Դրանք թույլ են տալիս միջամտել և հնարավորություն տալ մարդուն դուրս գալ դժվար իրավիճակից ու ստանալ անհրաժեշտ օգնություն:

DVRO՝ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԲ Է ԱՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ:

Եթե որևէ մեկը վնասվում է կամ սպառնալիքի է ենթարկվում այն անձի կողմից, ում հետ ապրում կամ ում սիրում է:

ՈՎ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ

- Ընտանիքի անդամները
- Ամուսինը, կինը կամ զուգընկերը
- Անձը, ով այժմ կամ նախկինում ապրել է այդ մարդու հետ

ՊԱՏՎԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

21 օր, հնարավոր է երկարացվի 1-ից 5 տարով:

Կալիֆորնիայում յուրաքանչյուր 3 կանանցից և տղամարդկանցից մոտ 1-ը վնասվել կամ բռնության է ենթարկվել մտերիմ զուգընկերոջ կողմից:

Ի՞նչ է սա:

DVRO-ն Կալիֆորնիայի ինն անվտանգությունն ապահովող հրամաններից մեկն է: Այն օգնում է մարդկանց, ում վնասել կամ սպառնացել է զուգընկերը, ընտանիքի անդամը կամ սենյակակիցը: Նրանք կարող են դիմել դատավորին՝ պաշտպանությունն ապահովելու համար:

Ում է այն պաշտպանում:

DVRO-ն պաշտպանում է այն մարդկանց, ովքեր տուժվել են մոտ մարդու կողմից: Սա կարող է լինել ամուսին կամ կին, զուգընկեր, սենյակակից կամ ընտանիքի անդամ:

Ինչպես է այն պաշտպանում

DVRO-ն օգնում է մարդկանց ապահով լինել: Այն ժամանակավորապես առգրավում է այդ անձի զենքերը: Հրամանի գործողության ընթացքում այդ անձը չի կարող գնել կամ ունենալ զենք, փամփուշտներ կամ փամփշտակալներ: DVRO-ն կարող է նաև արգելել այդ անձին մոտենալ ձեզ, զանգահարել կամ հաղորդագրություն ուղարկել, ինչպես նաև այցելել ձեր տուն, դպրոց կամ աշխատավայր:

Սկանավորեք այստեղ՝ ավելին իմանալու անվտանգությունն ապահովող հրամաններից և հրազենի բռնությունը նվազեցնելու միջոցների մասին:
ReducetheRisk.ca.gov

DVRO-FS-ARM-0725